

**ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԸ
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅՈՒՄ**

Վարդան ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՊՏՀ «Բանկային գործի և ապահովագրություն» ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. ապահովագրություն, ապահովագրական շուկա, կարգավորում, Մեծ Բրիտանիա

1980-ական թվականներից սկսած՝ Մեծ Բրիտանիայում գործունեություն իրականացնող մի շարք խոշոր ընկերություններ դադարեցրին իրենց գործունեությունը, և ստեղծված իրավիճակում հասարակության լայն զանգվածները պոտենցիալ ռիսկի տակ էին, որը պայմանավորված էր ընկերությունների կողմից իրենց հաճախորդների հանդեպ ունեցած պարտավորությունների չկատարմամբ: Այս պայմաններում օբյեկտիվ պահանջ էր ընկերությունների գործունեության միասնական կանոնների, ստանդարտների մշակումը և ներդրումը, որը կկարգավորեր իրավիճակը: Արդյունքում՝ 1986թ. կառավարության կողմից ընդունվեց Ֆինանսական ծառայությունների օրենքը (Financial Services Act 1986), սակայն վերջինս կարգավորում էր միայն կյանքի ապահովագրության, ներդրումային կազմակերպությունների և բանկերի ներդրումային գործունեության ոլորտները՝ իր մեջ չընդգրկելով ոչ կյանքի ապահովագրությունը, ապահովագրական միջնորդների գործունեությունը: Ֆինանսական այս ոլորտների՝ բանկերի, կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների և ոչ կյանքի ապահովագրողների վերահսկողությունը շարունակեցին իրականացնել համապատասխանաբար Անգլիական բանկը (bank of England) և Առևտրի և արդյունաբերության վարչությունը (Department of trade and industry)¹:

Ֆինանսական ծառայությունների օրենքը ուժը կորցրեց 2001 թ., ինչը պայմանավորված էր Մեծ Բրիտանիայում ֆինանսական ծառայությունների ոլորտի պետական վերահսկողության գլոբալ փոփոխություններով, որի արդյունքում 2000թ. ընդունվեց Ֆինանսական ծառայությունների և շուկաների մասին օրենքը (Financial Services and Markets Act 2000 (FSMA)): Նշված ռեֆորմների արդյունքում Մեծ Բրիտանիայի ողջ ֆինանսական հատվածի կարգավորումն ու վերահսկողությունը միասնականացվեց մեկ կառույցի՝ Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի (Financial Services Authority) ներքո:

¹ Աղբյուրը տե՛ս The Chartered Insurance Institute: “Risk, regulation and capital adequacy”, April 2009, page 13/4

Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմինը (Financial Services Authority) անկախ մարմին է, որ գործում է Ֆինանսական ծառայությունների և շուկաների մասին օրենքի (Financial Services and Markets Act 2000 (FSMA)) հիման վրա: Այն միակ կարգավորող մարմինն է, որը պատասխանատու է բանկային, ապահովագրական, հիպոթեկային վարկավորման, ներդրումային և ֆինանսական միջնորդային գործունեություն իրականացնող կազմակերպությունների կարգավորման համար, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների նկատմամբ բողոքների լուծման և լուծարվող կամ սնանկացող ապահովագրողների կողմից ապահովագրական հատուցումների վճարման գործընթացների կազմակերպման համար:

Համաձայն Ֆինանսական ծառայությունների և շուկաների մասին օրենքի (Financial Services and Markets Act 2000 (FSMA))՝ Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմինն ունի հետևյալ 4 հիմնական նպատակները².

Մեծ Բրիտանիայի ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության պահպանում: Վերջինս իրականացվում է այլ օղակների հետ վերահսկողական տեղեկատվության փոխանակման, շուկաների վերահսկողության և մոնիտորինգի միջոցով:

Նպաստել Մեծ Բրիտանիայի ֆինանսական համակարգի կայունության պաշտպանությանն ու ամրապնդմանը, ինչն իրականացվում է հաճախորդներին անհրաժեշտ տեղեկատվության, գիտելիքների փոխանցման միջոցով, որը նպաստում է նրանց կողմից ֆինանսական միջոցների առավել արդյունավետ կառավարմանը:

Հաճախորդների պաշտպանության պատշաճ մակարդակի ապահովումն իրականացվում է թույլատրելով գործունեություն իրականացնել այն ընկերությունների կամ անձանց այս կամ այն վերահսկվող ոլորտում, որը համապատասխանում է սահմանված պահանջներին, չափանիշներին: Գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալուց (լիցենզավորումից) հետո ընկերությունները ենթարկվում են Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի Ձեռնարկի (FSA Handbook) կանոններին և պահանջներին: Տվյալ կանոնների և պահանջների խախտման բացահայտման դեպքում Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմինը կատարում է համապատասխան հանձնարարականներ, սահմանում գործողությունների ծրագիր, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ենթարկում վարչական պատասխանատվության:

Նվազեցնել ֆինանսական հանցագործությունները: Այս ուղղությամբ իրականացվող գործողությունները բաժանվում են 3 հիմնական ուղղություն-

² Աղբյուրը տե՛ս <http://www.fsa.gov.uk/pages/about/aims/statutory/index.shtml>

ների՝ փողերի լվացում, խաբեություններ և շուկայի ներքին գործարքներ, գաղտնի համաձայնություններ:

Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի գործառույթներն են.

Սահմանել կանոններ իր Ձեռնարկի և այլ կարգերի միջոցով,

Լիցենզավորել, արտոնագրել ընկերություններին և անհատներին կարգավորվող ոլորտներում, շուկաներում գործունեություն իրականացնելու նպատակով,

Ուսումնասիրել արտաքին միջավայրի ռիսկերը, որոնք կարող են վտանգել հիմնական նպատակները,

Ուսումնասիրել, ընթացիկ մոնիթորինգի ենթարկել կարգավորվող շուկաները և դրանցում գործունեություն իրականացնող ընկերություններին,

Արձագանքել փոփոխություններին, ինչպիսիք կարող են լինել օրինակ եվրամիության կողմից ընդունվող նոր դիրեկտիվները կամ դրանց փոփոխությունները, և այլ զարգացումներին, որոնք պահանջում են իրականացնել գործող կարգերի, կանոնների փոփոխություններ,

Կանխել կամ կարգավորել կանոնների խափանումները, խնդիրները և խախտումները:

Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմինը մշակել և ներդրել է ռիսկի վրա հիմնված կարգավորման մոդելը (risk-based approach to regulation), որը կիրառվում է բոլոր վերահսկվող կազմակերպությունների նկատմամբ՝ անկախ նրանց գործունեության բնագավառից: Կարգավորման և վերահսկողության նախկին մոդելներում բացակայում էր ռիսկի գաղափարը, չնայած պետք է նշել, որ բանկային համակարգի կարգավորման ոլորտում ռիսկի վրա հիմնված կարգավորման մոդելը գործում էր նաև մինչև 2000թ.-ին Ֆինանսական ծառայությունների և շուկաների մասին օերնքի (Financial Services and Markets Act 2000 (FSMA)) ընդունումը: Յենց այս ռիսկի մոդելի վրա էլ հիմնված է ներկայիս Բազել- 2 համակարգը:

Առաջնորդվելով ռիսկի վրա հիմնված կարգավորման մոդելով՝ Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմինը ձգտում է բացահայտել, սահմանել իր չորս հիմնական նպատակների վրա հնարավոր ազդեցություն ունեցող ռիսկերը, որոնք կարող են ծագել առանձին ընկերություններից, շուկաներից, մեխանիզմներից, գործընթացներից և դրանց զարգացումներից, որից հետո միայն ձեռնարկել վերահսկողական միջոցառումներ համապատասխան ուղղություններով՝ հաշվի առնելով տվյալ ոլորտի կամ առանձին ընկերության արդեն իսկ գնահատված ռիսկերի մակարդակը:

Այսպիսով՝ Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի կողմից Մեծ Բրիտանիայի ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկման հիմքում դրված է ռիսկի գաղափարը, որը՝

ուղղակի ազդեցություն ունի կարգավորման էության, բնույթի վրա, որոշում է կարգավորման եղանակի, ուղղության և խորության վրա՝ կախված վերահսկվող կոնկրետ մարմնի գործունեությունից, նրան բնորոշ ռիսկերից,

նպաստում է ինքնակարգավորման մեխանիզմների մշակմանը:

Ռիսկերի գնահատման այս շրջանակը, որը կիրառվում է Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի կողմից, կոչվում է ARROW – the Advanced Risk-Responsive Operating Framework, որի բարեփոխված ARROW II տարբերակը սկսեց գործել 2006թ.-ից³: ARROW II Framework-ի ներքո կիրառվում են հետևյալ երեք ուղղությունները.

Ընկերությունների ARROW (ARROW Firms approach) մոտեցումը կամ ուղղահայաց վերահսկողությունը, որը կիրառվում է առանձին ընկերությունների ռիսկերի գնահատման նպատակով,

Թեմաների ARROW (ARROW Themes approach) մոտեցումը կամ հորիզոնական վերահսկողությունը, որը կիրառվում է խաչաձև ռիսկերի գնահատման նպատակով, որոնք առնչվում են մի շարք ընկերությունների, շուկայի որոշ հատվածների կամ ամբողջ շուկային,

Ներքին ռիսկերի կառավարում, որը կիրառվում է գործառնական ռիսկերի գնահատման նպատակով:

Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմինը վերահսկողություն էր իրականացնում մոտ 29,000 ընկերությունների նկատմամբ⁴: Այն կազմակերպությունները, որոնք առավել մեծ ռիսկեր և վտանգներ էին պարունակում իրենց գործունեության իրականացման ընթացքում, Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի կողմից ենթարկվում էին առավել խիստ և ընդգրկուն օրենսդրական ու նորմատիվային պահանջների պահպանման, և հակառակը. փոքր ընկերությունները, որոնք իրականացնում էին համեմատաբար սահմանափակ գործունեություն և իրենց գործունեությունը գնահատվում է ցածր ռիսկային, դրանց նկատմամբ ավելի քիչ միջա-

³ Աղբյուրը տե՛ս “The FSA’s risk assessment framework”, The Financial Services Authority, August 2006, page 2 of 72

⁴ Աղբյուրը տե՛ս <http://www.knowledge.cii.co.uk>, “The regulatory framework”, Simon Collins, October 2004 (Updated April 2011)

մտություն էր իրականացվում Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի կողմից: Սակայն 2008թ.-ից վերահսկության նշված ռազմավարությունը ենթարկվել է որոշ փոփոխությունների, որի համաձայն՝ համեմատաբար փոքր ընկերությունները 3 տարվա ընթացքում պետք է ենթարկվեն գործունեության, ռիսկերի գնահատման, որից հետո նրանց և Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի միջև կարգավորման վերահսկողական հարաբերությունները կիրականացվեն առավել ինտենսիվ մակարդակում:

Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի կողմից Մեծ Բրիտանիայի ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկողության ոլորտում հիմնական կարգավորող փաստաթղթերից մեկը հանդիսանում է վերջինիս կողմից մշակված Ձեռնարկը: Այն բաղկացած է 50 առանձին ուղեցույցերից, որոնց մի մասը տարածվում է բոլոր ընկերությունների, իսկ մյուս մասը՝ գործունեության առանձին ոլորտների ընկերությունների վրա:

Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ Մեծ Բրիտանիայում ապահովագրական շուկայի կարգավորումը հիմնված է առաջին հերթին շուկայի, ընկերությունների ռիսկերի կառավարման վրա՝ շեշտը դնելով ապահովագրական ընկերությունների վճարունակության և ֆինանսական կայունության ապահովման վրա՝ սահմանելով համապատասխան օրենսդրական պահանջներ՝ այդպիսով միաժամանակ «ազատություն տալով» շուկայի գործունեության, գործընթացների մնացած հատվածին և չխոչընդոտելով սակագնային ազատ մրցակցությանը, որն էլ այդ շուկայի զարգացման հիմնական պայմաններից մեկն է:

Վարդան ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ապահովագրական համակարգի կարգավորման փորձը Մեծ Բրիտանիայում

Բանալի բառեր. ապահովագրություն, ապահովագրական շուկա, Մեծ Բրիտանիա

Սույն հոդվածում ներկայացվել է Մեծ Բրիտանիայում ապահովագրական շուկայի կարգավորման գործող համակարգը, կարգավորման հիմնական, եղանակները և սկզբունքները: Հոդվածում պատմական ակնարկ է իրականացվել Մեծ Բրիտանիայի ապահովագրական շուկան կարգավորող մարմինների փոփոխության վերաբերյալ, այնուհետև ներկայացվել են ապահովագրական շուկայի կարգավորում և վերահսկողություն իրականացնող Ֆինանսական ծառայությունների կառավարման (FSA) մարմնի հիմնական գործառույթները: Բացի այդ՝ հակիրճ նկարագրվել է Ֆինանսական ծառայությունների կառավարման մարմնի կողմից ընդունված ռիսկի վրա հիմնված կարգավորման մոդելը:

Vardan GEVORGYAN

THE REGULATION PRACTICE OF INSURANCE MARKET IN GREAT BRITAIN

Key words: Insurance, insurance market, regulation, Great Britain

This article talks about the current regulation system, main regulation methods and principles in Great Britain© A historical overview about the change of UK insurance market regulators is conducted in the article© Main functions of Financial Services Authority ՖFSAՁ, regulating and supervising the insurance market of Great Britain, are also presented in the article© Apart from that, it is given a brief description of risk-based regulation model, accepted by Financial Services Authority©

Вардан ГЕВОРГЯН

Практика регулирования страхового рынка Великобритании

Ключевые слова: Страхование, страховой рынок, регулирование, Великобритания

В этой статье представлена действующая система и основные методы и принципы урегулирования страхового рынка Великобритании. В статье произведен исторический обзор изменений регуляторов страхового рынка Великобритании, представлены основные функции органа Контроля финансовых услуг, который осуществляет регулирование и надзор страхового рынка Великобритании. Кроме этого, кратко описана модель регулирования, основанного на риске и принятого органом Контроля финансовых услуг.